



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

7 օգոստոսի 2019 թվականի թիվ 85-Ա

ք. Երևան

#### ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի ԹԻՎ 5-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2019 թ. հունվարի 11-ի թիվ 3-Ն որոշումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2019 թվականի հունվարի 22-ի թիվ 5-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. որոշման 1-ին և 2-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության վերահսկողության բաժնի երեք ավագ մշտադիտարկողներին փոխադրել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության ծրագրերի մոնիտորինգի բաժին:

2. Կրճատել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի քարտուղարության փաստաթղթավարների 2 հաստիքները և ավելացնել մեկ հաստիք Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության իրավական ապահովման բաժնում և մեկ հաստիք Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության լիցենզավորման բաժնում:»

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ